

cunda, մայրաքաղաք Մելիտինէ): Այս «Փոքր-Հայք» ընդարձակուած մանաւանդ դէպ ի հարաւ՝ կը հասնէր մինչեւ Տաւրոսի լեռները, մինչեւ Կոկիսոն, բայց ծովի զէրք չունէր: Եղն Թէոդոսի Ա. ատեն Մեծ Հայաստանի բաժանմամբ (387ին)՝ Հռոմայեցւոց բաժին ինկած էր նաեւ Բարձր-Հայք մինչեւ Կարին: Ասի կառավարուեցաւ արտակարգ կերպով, մինչեւ որ Յուստինիանոս կազմակերպեց իւր Ա—Դ «Հայք», գաւառները: Արդ այս բաժանմամբ (536ին) Փոքր-Հայոց մէկ մասը, հռոմէական Բարձր-Հայք եւ ծովի զէրքը՝ Կիրասոն ու Տրապիզոն միացած՝ կազմեցին Յուստինիանու «Ա. Հայք» կամ «Երբքին Հայք» (ή ἐνδοτάτη Ἀρμενία): Հռոմէական Հայաստան ունեցած էր կրկին իւր ծովի զէրքը¹: Եւ այսպէս մնաց նոյն գաւառը՝ նոյն ծովի զէրքով նաեւ Մաւրիկ կայսեր (582—602) նոր բաժանմանց ատեն, անուն առնելով «Մեծ Հայք»:

Երբ Արաբացւոց հզօրանալով, եւ պա-

¹ Հմմտ. այս իրերու մասին ի միջի այոց. Dr. Karl Güterbock, Römisch-Armenien und die römischen Satrapien im 4. bis 6. Jahrh., Königsberg 1900, հայ թարգմ. Հ. Միրտիչ Նուրուշ, «Հռոմէական Հայաստան», եւն. Վիեննա 1914. «Ազգային Մատ.» ՀԵ: